Սրբուհի Մելքոնյան

Ֆինանսական տնօրեն

Սրբուհի Մելքոնյանը 2014 թվականին ավարտելով Երևանի Պետական Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը՝ սկսել է իր մասնագիտական կարիերան՝ սկզբում պետական համակարգում, իսկ հետո ստացել է հանրային ֆինանսների կառավարման մագիստրոսի կոչում:

Այնուհետև Սրբուհին մտել է մասնավոր ոլորտ՝ կուտակելով ֆինանսական և հաշվապահական փորձ տարբեր ոլորտներում, ինչպիսիք են վճարահաշվարկային ծառայություններ, շինարարություն, արտադրություն, հանրային սնունդ, լոգիստիկ ծառայություններ, ներմուծում, մանրածախ առևտուր, արտահանում և այլն: Հետագայում Սրբուհին ձեռք է բերել հարուստ փորձ արտաքին աուդիտի ոլորտում՝ որպես աուդիտոր և հարկային փորձագետ՝ զուգահեռ բարձրացնելով իր մասնագիտական որակավորումը ոչ միայն լոկալ, այլ նաև միջազգային միջավայրում: Նա ձեռք է բերել աշխարհում բարձր ճանաչում և հարգանք վայելող ACCA որակավորում:

Հետագայում ստանձնել է ֆինանսական տնօրենի պաշտոն ներդրումային ոլորտում՝ զուգահեռ կառավարելով նաև մի շարք գործառնական գործընթացներ, ինչպիսիք են գնումները, մարդկային ռեսուրսները, ընդհանուր ծառայությունները և այլն:

Ներկայումս Սրբուհին հանդիսանում է Անգլիայում Յորքի և Ֆրանսիայում Ստրազբուրգի համալսարանների MBA ուսանող:

Բացի իր հիմնական աշխատանքից, Սրբուհին նաև հանրային հիմունքներով ծառայում է իր մասնագիտական դաշտի զարգացմանն ու բարելավմանը՝ հանդիսանալով Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների Պալատի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամ:

Ամուսնացած է և ունի երկու դուստր: